



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

<< 07 >> *գրիգորյան* 2019թ.
ք. Արմավիր

N *ՎԳ/130-ԸՕ*

<<ՎԱՂԱՐԶԱԿԱՏԻ «ՆԵՐՍԻՍՅԱՆ» N6 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՋ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՊԻՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2019 թվականի օգոստոսի 1-ի N ՄՈ/321-2019 և 2019 թվականի օգոստոսի 1-ի N ՄՈ/325-2019 որոշումները, <<Վաղարշապատի «Ներսիսյան» N6 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպությունում փաստաթղթերի հանձնման-ընդունման աշխատանքները կազմակերպելու նպատակով.

Կարգադրում եմ՝

1. Ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովին (Ն. Սարգսյան)՝ հանձնաժողովի աշխատանքներին մասնակից դարձնել <<Վաղարշապատի «Ներսիսյան» N6 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության հաշվապահ Անահիտ Պետրոսյանին (համաձայնությամբ):
3. Հանձնաժողովին (Ն. Սարգսյան)՝ սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքներն իրականացնել հնգօրյա ժամկետում և արդյունքների մասին զեկուցել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի տեղակալին:
4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը (պետի պաշտոնակատար Ա. Վասիլյան)՝ սահմանված կարգով իրականացնել գործուղման ծախսերի վճարումը:
5. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Недействительная подпись

VERIFIED OCSP 07.08.2019 10:24:00 GMT+4
Подписано: GRIGORYAN KAREN 2212890818

ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ՝
Կ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հավելված

Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզպետի տեղակալի 2019 թվականի 07 օգոստոսի
N 199/130-2019 կարգադրության

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄ

Հանձնաժողովի նախագահ՝

Ն. Սարգսյան -

Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզպետարանի կրթության մշակույթի և սպորտի
վարչության կրթության բաժնի պետ:

Անդամներ՝

Գ. Գևորգյան -

Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզպետարանի կրթության մշակույթի և սպորտի
վարչության կրթության բաժնի առաջատար մասնագետ:

Ա. Պողոսյան -

Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական
զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական
բաժնի գլխավոր մասնագետ:

Հանձնող՝

Վերգինե Լևոնյան -

<<Վաղարշապատի «Ներսիսյան» N6
հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային
կազմակերպության նախկին տնօրեն:

Ընդունող՝

Սեդա Ենգիբարյան -

<<Վաղարշապատի «Ներսիսյան» N6
հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային
կազմակերպության տնօրեն:

**ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝**



ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆ